Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 444 - Ա
որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՊՈԶԻՏՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԴԱՀԼԻՃԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հարմարավետություն և որակյալ երաժշտական հնչողություն ապահովելու նպատակով նախատեսվում է վերանորոգել «Հայաստանի կոմպոզիտորների միություն» հասարակական կազմակերպության շենքում գտնվող դահլիճը, ինչը կնպաստի ավելի հաճախ մշակութային միջոցառումների կազմակերպմանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, մշակութային
6.	Ծրագրի բյուջեն	18,950,960 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Հայաստանի կոմպոզիտորների միություն» հասարակական կազմակերպություն (քաղաք Երևան 0002, Դեմիրճյան փողոցի 25 շենք, ՀՎՀՀ՝ 02508776)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի օգոստոսի 25-ից մինչև 2027 թվականի փետրվարի 26-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է վերանորոգել «Հայաստանի կոմպոզիտորների միություն» հասարակական կազմակերպության շենքում գտնվող դահլիճը, մասնավորապես կիրականացվեն դահլիճի պատուհանների փոխարինման, հին մանրահատակի քանդման և նոր բարձր որակի մանրահատակի տեղադրման և բարձրորակ լաքապատման, դահլիճի պատերի և առաստաղի վերանորոգման, դահլիճի բեմական հատվածամասի ընդլայնման, ջեռուցման նոր համակարգի տեղադրման աշխատանքներ: Իրականացվելու է՝ 2026 թվականի օգոստոսի 25-ից մինչև 2027 թվականի փետրվարի 26-ն ընկած ժամանակահատվածում՝ 18,950,960 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Հայաստանի կոմպոզիտորների միություն» հասարակական կազմակերպության շենքում գտնվող դահլիճի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 18,950,960 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

28.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ